Սիպիլ

Խունկը

Խունկը կը ծըխի խորանին առջին
Բուրվառին մեղմիկ ճոճումովն արծաթ,
Մուխի վարանք մը պըլլըված խաչին՝
Մըշուշով կ՝օծե սուրբերուն ճակատ:
Պաղատանքներու սարսուռներ երկայն
Կամարներուն տակ կը մարին տակավ,
Մոմերու տըժգույն բոցերը լալկան
Քըթթող աչքերով կը հևան կարգավ:
Սուրբ սյուներուն մոտ դողով կ՝երերա,
Սիրտ մը փաթթըված ըստերով համակ
Ծունկի պես լըռին հըրայքով կ՝եռա:
Խունկը իր ցընդի բուրվառին ծոցեն
Ու եթերն ի վեր կ՝ելլե խոյանքով,
Նյութ էր, բույր կըլլա լափվելով բոցեն
Իր կյանքը ցողված լույսի երանգով:
Հեք կնոջ սիրտն ալ, որ հոն կը մըխա,
Պիտի չազատի իր պտտյանեն կուռ,
Մինչև որ հալի, լուծվի, տարրանա
Լափվելով բոցեն տենչերուն մաքուր:

1901